ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

29 հունվարի 2019թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. *2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. *2018-19 ուստարվա երկրորդ կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

3. *2018-19ուստարվա II կիսամյակի դասացուցակների հաստատում:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

4. *Այլ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2018-19 ուս. տարվա I կիսամյակում ֆակուլտետում իրականացված աշխատանքերի մասին: Ըստ ուսումնական գործընթացի հաստատված ժամանակացույցի ամբիոնների և դեկանատի համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացվել են բոլոր պահանջները: Ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանով նախատեսված նիստերը ըստ օրակարգի անց են կացվել հաստատված ժամկետում: Իրականացվել են նաև նախորդ նիստերում ընդունված որոշումները:

Ֆակուլտետում դասաժամի բացթողում չի եղել, կրճատվել է ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները, դասախոսական կազմի և աշխատակիցների կողմից կարգապահական խախտումներ չի եղել, կազմակերպված անց է կացվել քննաշրջանը:

Այնուհետև նա անցավ քննաշրջանի արդյունքների քննարկմանը: Ըստ կուրսերի և ուսուցման ձևի /ընդհանուր, անվճար և վճարովի/ ներկայացրեց առաջադիմությունը, 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 115 ուսանող («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 83, «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրերով՝ 32 ուսանող): Քննաշրջանը հաղթահարել են 64 ուսանող, միայն գերազանց ստացել են 3 ուսանող /ԻԿՄ և ՔԿԳ IV կուրսերում/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 55,65%:

Անվճար ուսուցման համակարգում սովորում է 29 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 75,86%: Վճարովի ուսուցման համակարգում սովորում է 86 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 48,84:

Զեկուցողը միաժամանակ ներկայացրեց 2018-19 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի գրաֆիկը, որը կկազմակերպվի *06.02.-27.02.2019թ.* ժամանակահատվածում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ս. Հովակիմյանը, Ա. Վ. Ցուցուլյանը, Գ. Վ. Գուլակյանը:

Նիստի մասնակիցները ընդգծեցին, որ ֆակուլտետի ուսումնական և աշխատանքային գործընթացը իրականացվում է բարձր մակարդակով:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19թթ. ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի գրաֆիկը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի վերաբերյալ ներֆակուլտետային նախապատրաստական աշխատանքների մասին ընդհանուր հանձնարարականներ:

Օրակարգի երրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է

ուսումնական պլանին համապատասխան, դասախոսական անձնակազմի պակաս չկա: Իրականացվել են ուսումնական պարապմունքների կազմակերպման կազմակերպչական նախապատրաստական բոլոր աշխատանքները: ՈՒսումնական պարապմունքները կվերսկսվի 11.02.2019թ.:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Ս. Սիմոնյանը, Ա. Ս. Հովակիմյանը: Նրանք առաջարկեցին ներկայացնել հաստատման 2018-19ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

Օրակարգի չորրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ֆակուլտետում երեք կիսամյակ ՄՈԳ-ով գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների անունները որոնք հավակնում են անվանական կրթաթոշակի.

1. Ալավերդյան Գերասիմ Սամվելի ԻԿՄ III կուրս
2. Գասպարյան Տիգրան Սերյոժայի ՔԿԳ II կուրս

Քննարկումից հետո նիստի մասնակիցները որոշեցին.

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հետևյալ ուսանողներին ներկայացնել անվանական կրթաթոշակի, հասարակական ակտիվություն և պատշաճ վարքագիծ դրսևորելու համար.

1. Ալավերդյան Գերասիմ Սամվելի ԻԿՄ III կուրս Մոնթե Մելքոնյան
2. Գասպարյան Տիգրան Սերյոժայի ՔԿԳ II կուրս Վազգեն Սարգսյան

ՆԱԽԱԳԱՀ **Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**